ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Այս տարվա մայիսի 11-ին վախճանվեց սովետական թերապևտիկ դպրոցի հնագույն ներկայացուցիչներից մեկը՝ խոշորագույն կլինիցիստ, կարդիոլոգ, հայ բժշկության պատմաբան, ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամ, բժշկության պատմության միջազգային ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Լևոն Անդրեասի Հովհաննիսյանը:

Լ. Ա. Հովհաննիսյանը ծնվել է 1885 թ. Թիֆլիսում։ Բարձրագույն կրթություն ստացել է Խարկովի համալսարանում, 1909 թ. ավարտելով բժշկական ֆակուլտետը։ Դեռևս նախասովետական տարիներին նա լայն ճանաչում ուներ Անդրկովկասի քաղաքների բժշկական շրջաններում։ Կովկասյան բժիշկների գիտական ընկերություններում հայ բժշկագիտության հարցերին նվիրված նրա զեկուցումները մեծ համբավ էին բերել երիտասարդ բժշկին։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո Լ. Ա. Հովհաննիսյանը լայն աշխատանք է ծավալում հանրապետության բնակչության բժշկական սպասարկման և բժշկական բարձրորակ կադրերի պատրաստման բնագավառներում։ Նա հանդիսանում էր Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադիրներից մեկը, որը հետագայում անջատվեց Պետական համալսարանից և վերածվեց Երևանի բժշկական ինստիտուտի։ Այստեղ նա 45 տարի անընդմեջ ղեկավարել է ներքին հիվանդությունների պրոպոդեֆտիկայի ամբիոնը, պատրաստելով հարյուրավոր բժիշկներ, գիտությունների բազմաթիվ թեկնածուներ ու դոկտորներ։ Դեռևս 1943 թ. հրատարակված նրա ներքին հիվանդությունների դիագնոստիկայի դասագիրքը հանդիսանում էր բժշկական ինստիտուտի ուսանողների և հայ բժիշկների մի քանի սերունդների սեղանի գիրքը։

Մեծ է Լ. Ա. Հովհաննիսյանի վաստակը Հայաստանում մի ժամանակ խիստ տարածված մալարիայի դեմ պայքարելու և նրա իսպառ վերացման բնագավառում։ Նա հանդիսանում է Սովետական Հայաստանի առաջին հակամալարիական հիմնարկի՝ Երևանի տրոպիկական ինստիտուտի հիմնադիրը (1923 թ.)։ Այդ նույն տարին նրա նախաձեռնությամբ ստեղծվեց մեր հանրապետության անդրանիկ առողջարանը՝ Արզնու կարդիոլոգիական սանատորիան։ Ինչպես Արզնիում, այնպես էլ բժշկական ինստիտուտում պրոֆ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ լայն աշխատանքներ են ծավալվում կարդիոլոգիայի բնագավառում։ Հետագա տարիներին այդ աշխատանքները կենտրոնացվում են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի սիստեմում նրա ղեկավարությամբ ստեղծված (1953 թ.) Բժշկության սեկտորում, որը հիմք հանդիսացավ Երևանի կարդիոլոգիայի և սրտային վիրաբուժության ինստիտուտի (1961 թ.) ստեղծման համար։



Պրոֆ. Հովհաննիսյանը ակնառու աշխատանք է կատարել Սովետական Հայաստանի հանքային բուժիչ ջրերի ուսումնասիրության բնագավառում։ Դրա արդյունքը հանդիսացավ «Հայաստանի հանքային ջրերը» մենագրությունը (1936 թ.), որը ՍՍՀՄ հանքային ջրերին ու նրանց բուժիչ հատկություններին նվիրված առաջին լուրջ գիտական աշխատություններից մեկն է։

Լ. Ա. Հովհաննիսյանը նշանակալի երախտիք ունի հայերենի բժշկական տերմինաբանության մշակման գործում։ Այդ բնագավառում նրա երկարամյա աշխատանքի արդյունքները ամփոփված են «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանում», որի հեղինակներից մեկն է նա։ Հայերեն բժշկական տերմինների մշակումը մեծագույն նշանակություն ունեցավ մայրենի լեզվով բժշկական գիտական ու մասսայական գրականություն ստեղծելու համար։

Պրոֆ. Հովհաննիսյանը խոշոր աշխատանք է կատարել որպես գիտության պատմաբան։ Նրա բազմամյա ուսումնասիրությունների արդյունքն է հանդիսանում «Բժշկագիտությունը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» հինգ հատորանոց կապիտալ աշխատությունը, որը լայնորեն հայտնի է համաշխար-

հային գրականության մեջ։ Նրա ողջին են պատկանում բժշկագիտության տարբեր բնագավառներին վերաբերող մոտ 200 աշխատություններ (այդ թվում՝ 20-ից ավելի մենագրություններ), որոնց մի մասը հրատարակված է նաև ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով։

Մեր ժողովուրդը և սովետական կառավարությունը բարձր էին գնահատում մեծանուն բժշկի, խոշոր գիտնականի ու ականավոր քաղաքացու՝ Լ. Ա. Հովհաննիսյանի վաստակը։ Նա պարգևատրված էր մի շարք շքանշաններով ու մեդալներով։

Հանձին պրոֆ. Հովհաննիսյանի սովետական բժշկագիտությունը կորցրեց իր ականավոր ներկայացուցիչներից մեկին։

Բժշկական գիտ. դոկտոր Զ. ԴՈԼԱԲՋՅԱՆ